Վարդան Մակիչյան

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանության ճանաչում, Գերմանահայ համայնք, Բունդեսթագ, Ցեղասպանության ժխտումը քրեականացող նախագիծ, ԳԴՀ, Գերմանահայոց կենտրոնական խորհուրդ (ԳԿԽ):

2005 թ. ընդունված բանաձևը[1] հիմք հանդիսացավ ճանաչման գործընթացի հետագա ընթացքի կազմակերպման համար: Այն նաև հնարավորություններ ընձեռեց Բունդեսթագի բոլոր խմբակցություններին՝ անկախ իրենց՝ Թուրքիայի Եվրամիությանը անդամակցելու հարցում ունեցած հայացքներից, ավելի ազատ խոսել Հայոց ցեղասպանության մասին[2]:

2008 թ. հոկտեմբերին «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը հետամուտ եղավ Գերմանիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող նախագծի կազմելուն:

Այդ նպատակով խնդրագիր կազմվեց «Ցեղասպանությունը ժխտողների պատժումը և Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի փոփոխությունները» վերնագրով, որը նախատեսում էր փոփոխության ենթարկել Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածը[3]: Նախաձեռնության հեղինակը Թեսսա Հոֆմանն էր, որը նշում էր, որ իրենց նպատակն է հանդես գալ քաղաքացիական հասարակության սկզբունքներից բխող օրենսդրական նախաձեռնությամբ, և դա ներկայացնել Բունդեսթագի քննարկմանը[4]:

Առաջարկվող փոփոխությունները պետք է վերաբերեին ոչ միայն Հայոց Ցեղասպանությանը, այլ նաև արամեական, ասորական և հունական-պոնտական զոհերի խմբերին[5]:

«Ճանաչում» աշխատանքային խմբի խնդրագրի նախաձեռնողների հիմնական նպատակը այն էր, որ փոփոխություններ իրականացնեն Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ բաժնում, քանի որ դրանով սահմանվում էին միայն հաստատված Ցեղասպանության ժխտման վերաբերյալ պատասխանատվության կիրառումը: Դրանով, փաստորեն, բացառվում էր այլ ցեղասպանությունների ժխտման դեպքում իրավական պատասխանատվության ենթարկումը: Խնդրագրի նախագիծը օրենսդիրներից պահանջում էր հստակեցնել, թե օրենքը կոնկրետ ո՞ր Ցեղասպանությունների ժխտմանն է վերաբերում և ժխտման դեպքում ի՞նչ պատժամիջոցներ են սահմանվում և ի վերջո դրան համապատասխան ի՞նչ փոփոխությունների պետք է ենթարկվի Քրեական օրենսգիրքը:

Բացի դրանից՝ խնդրագրի տեքստում ներառված էր նաև առաջարկություն՝ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի «բ» կետի ստեղծման հետ կապված. «Մինչև հինգ տարվա ազատազրկման կամ էլ ֆինանսական պատժի կենթարկվի յուրաքանչյուրը, ով հրապարակայնորեն կժխտի, հավանություն կտա կամ էլ կարդարացնի որևիցե ցեղասպանություն»: Խնդագրում որպես ցեղասպանություններ բնորոշվում էին Նացիոնալ-սոցիալիստական և երիտթուրքական իշխանությունների կողմից իրա-

[1] 2005թ. հունիսի 16-ին ԳԴՀ Բունդեսթագը ընդունեց մի բանաձև, որը վերնագրված էր այսպես՝ «1915թ. հայերի արտաքսման և կոտորածների հիշատակի և հիշողության համար: Գերմանիան պետք է օժանդակի Հայաստանի և Թուրքիայի հաշտեցմանը»

[2] Տե՛ս Blydal C. Bergner J. Ch., Versöhnung, Instrumentallisierung, Beleidigung. Der Armenierantrag im Jahre 2005 und die politische Willensbildung in Deutschland zum Völkermord an den Armeniern, Berlin, 2011, S. 279.

[3] Այն կազմել էին «Ճանաչում» աշխատանքային խմբի անդամներ Սարգիս Բեցելգուեսը և փաստաբան Սվեն Լայստիկովը:

[4] Տե՛ս AGA beantragt beim Petitionsausschuss Erweiterung von Artikel 130 StGB, Berlin, 15.19.2008. Տե՛ս նաև http://www.aga-online.org/signature/detail.php?locale=en&petitionId=6

[5] Տե՛ս նույն տեղում:

կանացված ցեղասպանությունները, ինչպես նաև Նամիբիայի, Կամբոջայի, Ռուանդայի և Սրեբրենիցայի ցեղասպանությունները[1]:

Խնդրագրի տեքստի կազմումից հետո «Ճանաչում» աշխատանքային խմբի կողմից այդ նախագիծն ուղարկվեց Գերմանիայում գործող տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցչական միություններին՝ ստորագրության համար[2]: Այդ թվում էին «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը», «Գերմանիայում արամեացիների ֆեդերացիան», ինչպես նաև «Ասորական դեմոկրատական կազմակերպությունը»: Որպես այդ խնդրագրին օժանդակողներ ներառվեցին նաև Բեռլինի հայկական համայնքը և հայկական կազմակերպությունները[3]:

Խնդրագիրը Բունդեսթագի խնդրագրերի գծով հանձնաժողովին ներկայացվեց 2008 թ. հոկտեմբերի 15-ին, իսկ հոկտեմբերի 27-ին էլ հանձնվեց Արդարադատության նախարարությանը՝ դրա վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու համար[4]:

2008 թ. դեկտեմբերի 10-ին Արդարադատության նախարարությունը խնդրագրերի հանձնաժողովին ներկայացրեց իր դիրքորոշումը և իր պատասխանում մատնանշեց գոյություն ունեցող իրավակարգերը և դրա հետ կապված պատժամիջոցները, որոնք սահմանվում են Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով բնակչության հանդեպ իրականացվող հետապնդումների, նրանց հանդեպ սերմանվող ատելության և մարդու արժանապատվության դեմ իրականացվող ոտնահարումների հետ: Ընդ որում, իրավական պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն հրեաների ցեղասպանության, այլ նաև այլ ցեղասպանությունների ժխտողականությունը[5]:

Բացի այդ, նախարարությունը մատնանշեց նաև Քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասի և 194-րդ հոդվածը, որոնք գործում են ցեղասպանության ժխտման և դրա զոհերի հիշատակին հասցվող վիրավորանքների դեպքում: Արդարադատության նախարարությունը հավանություն չտվեց այդ խնդրագրին, քանի որ գերմանական դատական համակարգի համար անիրականանալի խնդիր էր հանդիսանում մի շարք պատմական իրադարձությունների ցեղասպանություն որակումը[6]:

Այս ամենի հետ, իհարկե, չէին կարող համաձայն լինել խնդրագրի նախաձեռնողները: 2009 թ. նոյեմբերի 19-ին խնդրագրի հեղինակներն ու դրա օժանդակողները հանդես եկան Արդարադատության նախարարության մեկնաբանությունների դեմ և դրանց առարկեցին հակափաստարկներով: Նրանց կարծիքով պատասխանը թերի է և կիրառելի չէ գործնականում [7]: Նշվում էր, որ պետք է ավելի հստակեցվեն այն դրույթները, թե ո՞ր ցեղասպանությունների հանդեպ ժխտողականություն ցուցաբերելու դեպքում պետք է իրականացվի քրեական պատասխանատվություն՝ մատնանշելով մի շարք երկների օրինակներ:

Ի վերջո՝ դաշնային կառավարությունը իր պատասխանի մեջ պարզորոշ արտահայտեց այդ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը և նշեց, որ իրենց տեսակետի համաձայն չի նախատեսվում կոնկրետ պատիժներ սահմանել այս կամ այն ցեղասպանության ժխտման դեմ: Այդ խնդիրը պետք է քննարկվի առանձին, մասնավոր դեպքերի օրինակով, և պատժիչ դատարանները պետք է որոշեն, թե պատմական ո՞ր իրադարձությունը որակեն որպես ցեղասպանություն:

---

[1] Տե՛ս նույն տեղում

[2] Zentralrat der Armenier in Deutschland e.V., Armenische Gemeinde Kehl e.V., Armenische Kirchen- und Kulturgemeinde Berlin e.V., Armenische Gemeinde Berlin e.V., Institut für Armenische Fragen e.V., Föderation der Aramäer (Suryoye) in Deutschland e.V. (FASD), Assyrische Demokratische Organisation (ADO), Verein der Pontier in Berlin „I Ipsilantides“ e.V., Verein der Griechen aus Pontos zu München e.V., Verein der Völkermordgegner e.V.

[3] Տե՛ս AGA beantragt beim Petitionsausschuss Erweiterung von Artikel 130 StGB, Berlin, 15.19.2008.

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս Bundesministerium der Justiz, Sekretariat des Petitionsausschusses des Deutschen Bundestages, Leugnung von Völkermord, Berlin, 10.12.2008. Տե՛ս նաև http://www.aga-online.org/news/attachments/AGA_Petition_130_STGB_Stellungnahme_BMJ.pdf

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս Arbeitsgruppe Anerkennung an dem Petitionsausschuss des Deutschen Bundestages,Berlin, 19.11.2009. Տե՛ս նաև http://www.aga-online.org/news/attachments/AGA_Petition_130_STGB_Stellungnahme_AGA_BMJ.pdf

2012 թ. հունվարի 26-ին «Ճանաչում» աշխատանքային խումբը ևս մի հարցում կատարեց գործընթացի վերաբերյալ՝ հստակեցնելու թե ինչու՞ է նացիոնալ-սոցիալիստների իշխանության կողմից իրականացված ցեղասպանության ժխտումը քրեորեն պատժելի, բայց միևնույն ժամանակ այն չի տարածվում այլ ցեղասպանությունների ժխտման վրա:

2012 թ. փետրվարին խնդրագրերի հարցերով զբաղվող հանձնաժողովը գրությամբ պատասխանեց «Ճանաչում» աշխատանքային խմբին և հայտարարեց խնդրագրի առնչությամբ առաջիկայում կայացվելիք որոշման մասին:

2012 թ. սեպտեմբերի 4-ին «Ճանաչում» աշխատանքային խումբը ստացավ խնդրագրերի հանձնաժողովի կողմից հիմնավորված որոշման վերաբերյալ հանձնարարական: Դրանով խնդրագրի հեղինակներին տեղեկացվում էր այն մասին, որ նացիոնալ-սոցիալիստների իշխանությունը, ինչպես նաև նրանց կողմից իրականացված ցեղասպանությունը Գերմանիայի համար այլ արժեք են ներկայացնում, և այն չի կարող համեմատության մեջ դրվել այլ ցեղասպանությունների հետ: Եվ դրանով էլ պայմանավորված՝ այդ կարգավորումը չի կարող տարածվել այլ ցեղասպանությունների վրա[1]:

Այս ամենին «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը» չէր մասնակցելում՝ բացի ստորագրահավաքից: ԳԿԽ-ն ևս ցանկանում էր, որ Գերմանիայում որոշում ընդունվի ցեղասպանությունը ժխտողներին Քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: ԳԿԽ-ի ղեկավարության մամլո ասուլիսում հայտարարվեց հետևյալը. «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը հասարակական նոր քննարկումների կոչ է անում, որպեսզի նոր թափով և սկզբունքայնորեն պահանջեն մեկ օրենք, որով պատիժներ կսահմանվեն ցեղասպանությունը ժխտողների դեմ»[2]:

Ամփոփելով վերոնշյալը՝ պարզ է դառնում, որ այս ամենը որևէ էական արդյունք չտվեց և սրանով ևս մեկ անգամ ապացուցվեց, որ եթե չկան հարցի վերաբերյալ Բունդեսթագում շահագրգիռ խմբակցություններ, ապա հարցը դրական լուծման չի հասնի:

Այս հարցում ևս հայկական համայնքը շատ մակերերսորեն էր ներգրավված, և գործընթացը իրականացնում էին մարդու իրավունքի պաշտպանությամբ զբաղվող հաստատությունները Թեսսա Հոֆմանի գլխավորությամբ, որը ևս մեկ քայլ հանդիսացավ ԳԴՀ-ում Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու համար:

Макичян Вардан, Деятельность армянских общин и других армянских структур Германии в процессе криминализации отрицания армянского геноцида,-В 2005 г. после принятия Бундестагом резолюции о геноциде армян, со стороны армянской общины и других организаций, занимающихся защитой прав человека, в частности рабочей комиссией “Признание” начался процесс, который призывал криминализировать отрицание геноцида армян в Германии.

Целью вышеотмеченного процесса было внесение изменений в том разделе уголовного кодекса, согласно которому несли ответственность за отрицание Холокоста.

В 2008 г. был составлен запрос со стороны заинтересованных сторон и отправлен в Бундестаг. В ответе на запрос было отмечено, что не существуют конкретно установленные санкции против отрицания того или иного геноцида и они не имеют право квалифицировать те или иные события как геноцид.

Позже, в 2012г. рабочий комитет “Признание” отправил еще один запрос, где требовалось уточнить почему отрицание Холокоста осуждается, а отрицание других факт нет. В ответе было отмечено, что Холокост представляет особую важность для Германии и он ов геноцидане может сравниваться с другими геноцидами.

---

[1] Տե՛ս Deutschen Bundestag Kersten Steinke an Tessa Hoffman, die begründete Beschlussempfehlung, Berlin, 04.09.2012. Տե՛ս նաև http://www.aga-online.org/news/attachments/AGA_Petition_130_STGB_Entscheidung_Petitionsausschuss.pdf

[2] Տե՛ս Vorstand des Zentralrats der Armenier in Deutschland, Völkermord unter Strafe stellen, Frankfurt am Main, 22.12.2011. Տե՛ս նաև http://www.zentralrat.org/en/node/10861

Vardan Makichyan, The activity of Armenian communities and other oragnizations in Germany for the criminalization of the denial of Armenian Genocide,- After Bundestag adopted the resolution on Genocide in 2005 a process about the criminalization of the denial of Armenian Genocide in FRG started by the Armenian community and the organization dealing with Human rights, in particular the "Recognition" group.

This mainly intended to change the section in the Criminal Code according which only the denial of Holocaust in Germany was subject to liability.

In 2008 a petition was drawn up by the interested organizations and was sent to Bundestag.

The answer noted that there were no specific punishments for the denial of this or that Genocide and they have no right to qualify this or that act as Genocide.

Later in 2012 "Recognition" group drew up another petition to clarify whether only the denial of Holocaust was subject to liability or not. The answer was that Holocaust can't be compared to other genocides as it is of specific importanse for Germany.